



<<Կանայք որպես փոփոխության գործոն՝ Հայաստանում գյուղի կանանց դերի ուժեղացում>>

Ֆրանսիայի Ռոնալպ տարածաշրջանի կողմից համաֆինանսավորվող ծրագիր

Ծրագրի գործընկերներ՝ WECF - Ֆրանսիա (Ռոնալպ) և <<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ /AWHHE/ (Հայաստան)

Ընդգրկված համայնքները՝ Դիտակ (Արարատի մարզ), Ոսկեվան (Տավուշի մարզ), Սաղմոսավան (Արագածոտնի մարզ) և Սոլակ (Կոտայքի մարզ): Դիտակ և Ոսկեվան համայնքներն ընդգրկված են եղել 2012թ. ծրագրում և այս գյուղերի ընտրությունը ներկայիս ծրագրին մասնակցության համար պայմանավորված է ջանքերի շարունակականության և օպտիմալացման ապահովման անհրաժեշտությամբ: Սոլակ համայնքը 2012թ. Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) կողմից ֆինանսավորված գործունեության շրջանակներում նույնպես ծրագրի մաս է կազմել: AWHHE –ն աշխատել է Սաղմոսավան համայնքում, տեղյակ է համայնքի կարիքներին և հատկապես համայնքի ներուժին՝ որպես ծրագրի մասնակիցների՝ տեղական կանանց խմբի ակտիվության և տեղական իշխանությունների աջակցության առումով:

Ծրագրի տևողությունը՝ հոկտեմբեր 2013թ.- հոկտեմբեր 2014թ.

Ծրագրի ընդհանուր նպատակը՝

Մինչև 2015թ.-ը աղքատության կրճատման գլոբալ նպատակի իրականացմանը նպաստելու համար, ծրագիրը նպատակ ունի նպաստել գենդերային հավասարությանը և կանանց հզորացմանը՝ խրախուսելով կայուն զարգացման մեջ հայ գյուղաբնակ կանանց լայն ներգրավվածությունը՝ հասարակական և տնտեսական կյանքում համայնքային մակարդակում նրանց ակտիվ մասնակցության միջոցով:

Առանձնահատուկ նպատակներ՝

1. Ամրապնդել կանանց ռեսուրս կենտրոնները (ստեղծված նախորդ ծրագրի ժամանակ) աջակցության փոքր ցանցերի խրախուսման և փորձի փոխանակման միջոցով:
2. Խթանել կանանց եկամուտների ստեղծման գործընթացը՝ ծրագրի չորս թիրախ գյուղերում (Սոլակ, Սաղմոսավան, Դիտակ, Ոսկեվան) կայուն գյուղատնտեսության և եկամտաբեր գործունեության վերաբերյալ դասընթացների միջոցով:
3. Ամրապնդել կանանց դերը համայնքների ներսում և ապահովել կապի հնարավորություն՝ Ռոնալպ տարածաշրջանի կին ֆերմերների հետ փոխանակման այցերի միջոցով:

Ծրագրված գործողություններ՝

1. Ամրապնդել կանանց ռեսուրսային կենտրոնները

1.1 Կազմակերպել միջոցառում գյուղի կանանց միջազգային օրվա կապակցությամբ չորս գյուղերից մասնակիցների հետ՝ ի նշան ծրագրի պաշտոնական մեկնարկի:

1.2 Փորձի փոխանակության նպատակով կազմակերպել հանդիպում Դիտակ / կամ Ոսկեվան համայնքների կանանց ռեսուրս կենտրոններում՝ Սոլակ և Սաղմոսավան գյուղերի ակտիվ կանանց հետ:

1.3 Յուրաքանչյուր գյուղի համար ընտրել տեղական համակարգող և կազմակերպել սեմինար չորս համակարգողների ցանցային աշխատանքի համար՝ Հայաստանում գյուղական կանանց փոքր ցանցային կենտրոն ստեղծելու նպատակով:

1.4 Կազմակերպել 6 գյուղի ակտիվ կանանց այց Կոտայքի, Արմավիրի և Արարատի այլ համայնքներում ստեղծված ռեսուրս կենտրոններ (Ֆանտան, Քաղսի /Կոտայքի մարզ/, Տարոնիկ և Լուկաշին / Արմավիրի մարզ/, Հայանիստ, Խաչփար /Արարատի մարզ), ներառյալ՝ 2012թ. ԳԷՀ-ի ծրագրի շրջանակներում ստեղծված ռեսուրս կենտրոններ:

1.5 Կենտրոնների հագեցում գյուղատնտեսական գործիքներով, սերմերով, պարարտանյութերով և այլն:

2. Նպաստել գյուղական համայնքների կայուն զարգացման մեջ կանանց մասնակցությանը

2.1 Կազմակերպել 4 դասընթաց (յուրաքանչյուր մասնակից գյուղում՝ մեկ դասընթաց) գյուղական բնակավայրերում կանանց համար կայուն գյուղատնտեսություն վարելու և տնտեսական գործունեություն իրականացնելու մասին:

2.2 Կազմակերպել մրցույթ՝ եկամտաբեր գործունեության լավագույն գաղափարի համար (ընտրող հանձնախմբի կազմում կլինեն գյուղնախարարության և գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների և ծրագրի կազմակերպչական կոմիտեի փորձագետները):

2.3 Կազմակերպել ուսուցում 4 բիզնես լավագույն գաղափարների հեղինակ կանանց համար՝ ծրագրի իրականացման պլանների մշակման մասին (յուրաքանչյուր գյուղի համար կընտրվի 1 ծրագիր):

2.4 Ուսուցանված կանանց ցուցաբերել ֆինանսական աջակցություն՝ իրենց գաղափարներն իրականացնելու համար (հիմնվելով համաձայնեցված պայմանների /չափանիշների վրա, օրինակ, սեփական ոչ գումարային/բնեղեն ներդրում):

3. Փորձի փոխանակում և քաղած դասերի տարածում

3.1 Կստեղծվի հրապարակում՝ Հայաստանում ակտիվ կանաց մասին, որտեղ կներառվի նրանց անունը, լուսանկարը, հեռախոսահամարը և ծրագրի նկարագիրը: Ընտրված պատմությունները կլուսաբանվեն և կօգտագործվեն այլ կանանց կողմից՝ իրենց համայնքներում տնտեսական գործունեություն ծավալելու համար:

3.2 Ընտրված չորս կանայք և AWHHE –ի երկու ներկայացուցիչ կայցելեն Ռոնալպ՝ հանդիպելու գյուղական գործունեությունում ներգրավված կանանց և դրանով իսկ կխթանվի նրանց շահագրգռվածությունը և կարողությունները: Նրանց դիմանկարները կգետեղվեն «Կանանց դիմանկարները և ակտիվ միասնություն» վերնագրով գրքույկում, որը կստեղծվի WECF- Ֆրանսիայի կողմից:

Արդյունքներ՝

- Դիտակի և Ոսկեվանի կանանց ռեսուրս կենտրոնները կամրապնդվեն Սոլակի և Սաղմոսավանի համայնքներում ռեսուրս կենտրոնների հետ համագործակցության շնորհիվ: Սոլակի և Սաղմոսավանի համայնքներում ռեսուրս կենտրոնները կամրապնդվեն՝ կանանց կարիքներն ավելի լավ արտացոլելու համար:
- Կանանց դերը գյուղական համայնքների կայուն զարգացման մեջ կամրապնդվի՝ չորս լավագույն ծրագրային գաղափարների բացահայտման և իրականացման միջոցով:
- Փոխանակման այցի շնորհիվ կամրապնդվի հայ և ֆրանսիացի գյուղական կանանց գիտելիքները և հմտությունները՝ գյուղատնտեսության հետ կապված տարբեր տնտեսական գործունեությունների ոլորտում:
- Գյուղի կանանց տնտեսական հաջողությունների մասին հրապարակումը մատչելի կլինի Հայաստանի այլ գյուղական համայնքներում աշխատող շահագրգիռ կանանց համար:.
- Կկազմակերպվի փոխանակման այց և ուսում Ֆրանսիայում՝ լավագույն ծրագրային գաղափարների հեղինակ հաղթող կանանց համար (գործունեությունը կիրականացվի մասնագիտական աջակցության շրջանակներում)